

ԱՆՎԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՅԻՆ, ՀԱՅՏԱՆՇԱՅԻՆ ԵՎ ՄԵԿՈՍԱՅՆՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՆՈՐՋ

Յ. Լ. ԶԱԶԱՐՅԱՆ

Մասնագետների խոստովանությամբ՝ հատուկ անվան հասարակական բնույթը, արժեքը և նշանակությունը խիստ անբավարար է ուսումնասիրված թե՛ լեզվաբանների, թե՛ ընկերաբանների, թե՛ ազգագրագետների կողմից¹: Եվ իսկապես, լեզվաբանները ուսումնասիրել են հատուկ անունները ծագումնաբանական, իմաստաբանական, կառուցվածքային, քերականական առանձնահատկությունների առումով², ազգագրագետներն ուսումնասիրել են դրանք պատմաաշխարհագրական և մշակութային առումներով, ընկերաբաններին հետաքրքրել է անվան դերը անհատի և հասարակության կյանքում, անվան իրավական արժեքը, մասամբ՝ հասարակության վերաբերմունքը անվան նկատմամբ՝ բառարգելի (տարուի) առումով: Սակայն ուշադրությունից վրիպել է հատուկ անվան՝ որպես հասարակական երևույթի համալիր ուսումնասիրության խնդիրը: Նույն խնդիրը լեզվի վերաբերյալ դրված է և վաղուց մշակվում է՝ որպես հանրալեզվաբանություն: Սակայն այդ մշակումները քիչ չափով են մասնավորեցված լեզվական յուրահատուկ երևույթներից մեկի՝ հատուկ անվան վերաբերյալ: Այնուհանդերձ, դրանք ինչ-որ չափով կարող են հիմք դառնալ հատուկ անվան հասարակական բնույթի ուսումնասիրության խնդրին մոտենալու համար: Դրա համար պետք է ցույց տալ «լեզու - հատուկ անուն» կապը իրականացնող անցումային երևույթների հարաբերությունը թե՛ մեկի, թե՛ մյուսի հետ, մեկից մյուսին աստիճանական անցման շղթան և համապատասխան հատկությունների փոփոխությունների ընթացքը:

Լեզվի՝ որպես հասարակական երևույթի հատկությունները լեզվի միավորների առումով ամենից ավելի բնորոշ են բառերին և հատկապես անուններին:

Լեզվի կարևոր գործառույթներից մեկն է տվյալ լեզուն կրող անհատների կամ ազգային, մշակութային, դասակարգային և այլ կարգի հասարակական խմբերի ու նրանց կողմնորոշումների հայտանշումը: Այսինքն՝ լեզուն հանդես է գալիս որպես, ասենք, ազգային պատկանելության կամ դասակարգային ձգտման նշան: Այլ կերպ ասած՝ անհատի կամ հասարակական խմբերի լեզվական վարքով կարելի է որոշել նրանց ազգային, դասակարգային, մշակութային պատկանելությունը կամ կողմնորոշումը: Սակայն դա դեռ բոլորը չէ: Լեզուն հասարակական տվյալ խմբի անդամների մի կամ մեծ մասի համար

¹ Տե՛ս **В. А. Никонов**, Личное имя - социальный знак. В сб.: "Глазами этнографов", М., 1982, էջ 27-29:

² Տե՛ս, օրինակ, **Գ. Ղափանցյան**, Հին Հայաստանի տեղանունները, ԵՊՀ գիտ. աշխատությունների ժողովածու, հ. 4, Եր., 1940: **Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա - Ե, Եր., 1942-1962: **Հ. Բարսեղյան**, Հատուկ անուն. տեսական նկարագրական ակնարկ, Եր., 1964: **Գ. Զահուկյան**, Բնիկ հայերեն արմատներով կազմված հայկական անձնանունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1984, հ. 4: **Տ. Ավետիսյան**, Հայկական ազգանուն, Եր., 1987:

կարող է ձեռք բերել շատ ավելի մեծ արժեք՝ ընկալվելով որպես ինքնության դրոշ, միասնության խորհրդանիշ: Այստեղից էլ՝ լեզուների խորհրդանշային գործառույթը: Միասնությունը ենթադրում է նաև այլ միասնություններից տարբերակում, առանձնացում: Այսինքն՝ կարելի է ասել, որ լեզուն նաև տարբերակման նշան է:

Սրա հետ սերտորեն կապված է լեզուների՝ մեկուսացման գործառույթը: Հասարակական խմբերի սոսկ տարբերակումից բացի կյանքում հաճախ առաջ է գալիս դրանց մեկուսացման պահանջը: Մեկուսացման խնդրում աշխարհագրական, քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական կենցաղային, հոգեբանական գործոններից հաճախ ավելի ուժեղ է լեզվական գործոնը: Թերևս հանրությունների մեկուսացման այս պահանջը բարբառների ու լեզուների առաջացման հիմքում ընկած ընդհանրական նախադրյալներից է: Համեմայն դեպս, անվիճելիորեն այդ պահանջի արդյունք են ժարգոնները, ծածկալեզուները (այդ թվում՝ ճնճղկերենը), ծածկագրերը: **Լեզվական մեկուսացման գլխավոր չափանիշը օտարի համար անհասկանալիությունն է:**

Լեզվական մեկուսացման հակակշիռն է լեզվական շփումը, որի հետևանքն է երկլեզվությունը: Լեզվական մեկուսացման և շփման զուգակցման ձևն է միակողմանի երկլեզվությունը, երբ խմբերից մեկը տիրապետում է մյուսի լեզվին, բայց ոչ՝ հակառակը: Օրինակ, հայերեն-ռուսերեն երկլեզվությունը միակողմանի է, այսինքն՝ հայերը լեզվականորեն (հայերենով) մեկուսացած են ռուսներից և միաժամանակ լեզվականորեն (ռուսերենով) շփվում են նրանց հետ, սակայն ռուսները հնարավորություն չունեն լեզվականորեն մեկուսանալու հայերից, քանի որ նրանց հետ շփվող հայերի մեծ մասը գիտի ռուսերեն: Սա նշանակում է, որ ռուսերենը ինչ-որ չափով զրկված է մեկուսացման իր գործառույթից: Այդ գործառույթից ավելի մեծ չափով է զրկված անգլերենը, որին տիրապետում են մեծաթիվ այլախոսներ:

Խորհրդանշային, հայտանշային և մեկուսացնող գործառույթները այս կամ այն չափով հատուկ են ոչ միայն լեզուներին ընդհանրապես, այլև նրանց հիմնական միավորներին՝ բառերին, հատկապես անուններին: Ի վերջո, ամենից ավելի բառերն են ապահովում լեզուների հասկանալիությունը, ամենից ակնհայտորեն բառապաշարի վրա են ազդում լեզվական շփումները, անհատի և հասարակական խմբի բառապաշարն ամենից լավ է արտացոլում լեզվական կողմնորոշումը: Ահա թե ինչու լեզուների մաքրության, լեզվապահպանման խնդիրներն առաջին հերթին հանգում են բառային փոխառություններին հարցին: Իսկ փոխառության ամենից ավելի ենթակա են անունները:

Լեզվում որպես բառային զուգաձևություններ առկա են լինում ինչպես բնիկ ձևեր (հին և նոր, գրական և բարբառային և այլն), այնպես էլ տարբեր լեզուներից փոխառյալ համարժեքներ: Դրա շնորհիվ խոսքում այս կամ այն զուգաձևի եզրերի նախընտրության ու գործածության առանձնահատկությունները (հաճախություն, նպատակ, խոսքաշար և այլն) կարող են որպես հայտանիշ ծառայել տվյալ անհատի կամ հասարակական խմբի ոչ միայն լեզվական, այլև մշակութային, հասարակական, քաղաքական կողմնորոշումները պարզելու համար:

Որևէ լեզվի կատարած մեծաթիվ փոխառությունները ինչ-որ չափով հասկանալի են դարձնում փոխառող լեզվով խոսքը փոխատու լեզուների կողմների համար, այսինքն՝ փոխառությունները թուլացնում են լեզուների մեկուսացնող գործառույթը: Դրանով է բացատրվում զբոսաշրջիկների՝ թե՛ իրենց, թե՛ միջնորդ լեզվով մաքուր խոսելու ձգտումը, երբ պետք է լինում չբացահայտել սեփական ազգային ինքնությունը:

Այս հանգամանքների շնորհիվ լեզվի ամեն մի բնիկ բառ, մանավանդ եթե այն ունի փոխառյալ համարժեք, ինքնին ձեռք է բերում խորհրդանշային

արժեք: Ահա թե ինչու մաքրամոլության ու օտարամոլության պայքարը հաճախ ընդունում է ծայրահեղ բնույթ, քանի որ կապվում է ազգային զգացմունքների և քաղաքական կողմնորոշումների հետ:

Խորհրդանշային, հայտանշային և մեկուսացնող գործառույթների հարցում յուրահատկություններ են դրսևորում գոյականների տարբեր խմբեր և առանձնապես հատուկ անունները:

Հատուկ անուններն առավելապես կատարում են խորհրդանշային, ինչպես նաև հայտանշային գործառույթներ, իսկ մեկուսացնող գործառույթը բնորոշ է միայն թարգմանվող հատուկ անուններին (*Միավորված ազգերի կազմակերպություն*, *Հայկական բարձրավանդակ*, *Բարեհուս հրվանդան*, *Փղուկրե Ափ*, *ԽՍՀՄ*, *Օրի կաթին*, *Հուսին*, *Սոմխեթի*, *Վրաստան* և այլն): Մեկուսացնող գործառույթ չեն կատարում այն անունները, որոնք նույնությամբ կամ գոնե ճանաչելիության սահմաններում փոփոխված ձևերով գործածվում են տարբեր լեզուներում (*Նյու Յորք*, *Շեքսպիր*, *Սևան*, *Ասիա*, *Ուկրաինա*, *Պլուտոն* և այլն):

Հասարակ և հատուկ անունների համեմատությամբ միջանկյալ դիրք են գրավում հատկաբանությունները (տարաշխարհիկ երևույթների անունները) և որոշ խիստ մասնագիտական եզրեր, որոնք դրսևորում են մե'րթ մեկի, մե'րթ մյուսի հատկությունները: Այսպես, միայն որոշ խորհրդանշային արժեք բնորոշ է ծագմամբ տարաշխարհիկ և հատուկ անուններից առաջացած հասարակ անուններին ու եզրերին (*ճաիրիտ*, *սևանիտ*, *ստալինիտ*, *վոլտ*, *վատտ*, *սիլուետ*, *մակինտոշ*, *խուլիգան* և այլն):

Հատկաբանությունները նույնությամբ կամ փոքր ձևափոխություններով անցնելով լեզվից լեզու՝ կորցնում են իրենց մեկուսացնող, մասամբ նաև հայտանշային գործառույթը՝ հիմնականում բնիկ լեզուներում պահպանելով խորհրդանշային արժեքը (*մորասի*, *աուլ*, *սլորողկա*, *յուրտ*, *յաթաղան*, *իկերանա*, *ձյուռ*, *պասիրոու* և այլն):

Տեղանուններին, անձնանուններին և այլ կարգի չթարգմանվող անուններին, թվում է, խորհրդանշային և հայտանշային գործառույթները բնորոշ չեն: Սակայն դա՝ միայն առաջին հայացքից: Իրականում հատուկ անունները խորհրդանշային և հայտանշային գործառույթների խտացումներ են: Հատուկ անունները, շնորհիվ իրենց ստուգաբանելիության (պատճառաբանվածության) և արտաքին ձևի, նշում են ազգային պատկանելություն (խորհրդանշային գործառույթ): Օրինակ՝ *Արմավիր* անունը Հյուսիսային կովկասում: Այդպես կարելի էր մեծ մասամբ իմանալ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի ազգային կազմը (*Պրիվոլնյե*, *Լեռնոստովո* և այլն՝ ռուսական գյուղեր, *Կզլզույ*, *Գյուլլիդուզ*, *Դաշքենդ*, *Ղարադայա* և այլն՝ ադրբեջանական գյուղեր, *Շինուհայր*, *Աշտարակ*, *Մեծավան*, *Նորաշեն*, *Քարազուխ* և այլն՝ հայկական գյուղեր): Այս իմաստով խաբուսիկ են *Ալավերդի*, *Վարդանիձոր*, *Մայակովսկի* և այլ անվանումներ: Եթե դրանցից *Վարդանիձոր*-ը, օրինակ, խորհրդանշային է պատմականորեն և ցույց է տալիս բնակավայրի՝ նախկինում հայաբնակ լինելը՝, ապա *Մայակովսկի*-ն և *Ալավերդի*-ն ընդամենը դառը հիշողություն են օտար տիրապետության և մշակութային ազդեցության ժամանակներից³:

Մասնավորապես, տեղանվան խորհրդանշային իմաստի ցայտուն վկայություն է *Ղարաբաղ* անվանումը: Այժմ ադրբեջանցիները նաև դրանով են ուզում անտեղյակ մարդկանց հավատացնել, որ Ղարաբաղը թրքական հող է⁴: Հիշենք Բախտիար Վահաբզադեի «Հողից բաժին չեն տա» բանաստեղծության մի եռատող:

³ Տե՛ս նաև Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, Եր., 1940, էջ 344:

⁴ Դրան հակառակ՝ որոշ հայ մասնագետներ էլ փորձում են *Ղարաբաղ* տեղանունը հայերենով ստուգաբանել:

⁵ 1988-ից այդ գյուղը դարձյալ հայաբնակ է:

Ե՞րբ քոնը դարձավ *Ղարաբաղն իմ վես*,
Նրա անունն իսկ թող վկայի դա:

Հողը կամավոր ոչ ոքի չեն տա...

Նույնպիսի պատճառաբանության համար մատնանշվում է Ստեփանակերտի նախկին՝ *Խանքենդի* անունը:

Պատահական չէ, որ նվաճողները շտապում են գրավյալ վայրերի անունները թարգմանել, ըստ իրենց լեզվի աղավաղել կամ փոխարինել իրենց լեզվով նոր անվանումներով: Այդպես, *Գետաշեն*-ը թարգմանվել է *Չայքենդ*, *Քարագյուխ*-ը՝ *Դաշբաշ*, *Օձասար*-ը՝ *Իլանդաղ*, *Վաղավեր*-ը՝ *Թեզխարաք*, *Օձուն*-ը աղավաղվելով դարձել է *Ուզունյար*, *Մեսրոպավան*-ը՝ *Նագրվան*, *Ագուլխ*-ը՝ *Այլիս*, *Խաղխաղ*-ը՝ *Ղազախ*, *Տավուշ*-ը՝ *Թովուզ*, *Արզական*-ը՝ *Արգաքյանդ*, *Նորատուս*-ը՝ *Նորադուզ*, *Արտուար*-ը՝ *Օրդուբադ*, *Բանանց*-ը՝ *Բայան*, *Աղահեջք*-ը՝ *Հաչին*, *Խաչակապ*-ը փոխարինվել է *Ղուշչի*-ով, *Վարարակն*-ը՝ *Խանքենդի*-ով, *Մասիս*-ը՝ *Ադրիդաղ*-ով, *Սևան*-ը՝ *Գյոկչա*-ով, *Հրազդան*-ը՝ *Չանգու*-ով...

Հատկանշական է, որ աղավաղումների նպատակը հաճախ վերաստուգաբանությունն է նվաճողի լեզվով (օրինակ՝ *Օձուն* > *Ուզունյար*, *Արտուար* > *Օրդուբադ*): Հատկանշական է նաև այն, որ նվաճողի տված նոր անունները կամ աղավաղված տարբերակները գրեթե առանց դիմադրության ընդունվել են նվաճվողների կողմից, և հետագայում մեծ ջանքերի գնով են արտամղվում այդպես առաջացած օտար անվանումները:

Օտար տիպաբանության հետևանքով առաջացած հատուկ անունների մակաշերտից ազատվելը հաճախ դառնում է պետական քաղաքականության խնդիր: «Օտարի ժամանակավոր տիրապետության և բռնի ազդեցությունների վերացման շրջանում յուրաքանչյուր ազատագրված ժողովուրդ աշխատում է բռնության այլ հետևանքների վերացման հետ այն վերացնել նաև հատուկ անունների բնագավառից: Այս կապակցությամբ կատարված նոր անվանումներն ու հին հատուկ անունների վերականգնումը արդարացի և պատմության համար օգտակար երևույթներ են»⁵:

Ինչպես ասացինք, խորհրդանշային առանձնակի արժեք ունեն նաև անձնանունները: Պատահական չէ, որ թրքացած բուլղարները վերականգնում են իրենց քրիստոնեական անուն-ազգանունները՝ դրանով իսկ հավաստելով իրենց բուլղարագի լինելը, դրանով իսկ առաջ բերելով թուրքերի խիստ վրդովմունքը: Վրացիները իրենց երկրում ապրող վրացախոս հայերին հարկադրում են վրացական վերջավորություններ տալ իրենց ազգանուններին: Այդպես, խորը մտածող և սկզբունքային որոշ հայեր հրաժարվում են թուրքերեն բառերի հիման վրա ստեղծված իրենց անուններից կամ ազգանուններից՝ փոխարինելով դրանք ազգային անվանումներով: Ամերիկացի հայագետ Աբրահամ Տեռյանի նախկին ազգանունն է *Թերզիբաշյան*: Պետրոս Դուրյանի նախկին ազգանունը եղել է *Չմպայան*: Այժմ *Գյուլբահարը* դառնում է *Գոհար*, *Արկադին՝ Արտակ*, *Վոլոդյան՝ Վահրամ* և այլն: Միաժամանակ տեղի են ունենում հակադարձ ուղղություններով անվանափոխություններ (*Աստղիկ-Ասյա*, *Ալվարդ-Ալլա*, *Անդրանիկ-Անդրեյ*, *Ասատուր-Արթուր*, *Միքայել-Մայքլ*, *Շուշան-Սյուզի*, *Սոնա-Սոնյա*, *Անհիտ-Անյա* և այլն)⁶: Սրանք եթե հարմարվելու նպատակ ունեն օտար միջավայրում, ապա պարզապես օտարամետ կողմնորոշման հայտանիշ են բնիկ միջավայրում:

⁵ Լ. Բարսեղյան, Հատուկ անուն. տեսական նկարագրական ակնարկ, Եր., 1964, էջ 38:

⁶ Կա նաև կրճատման օտար ձև՝ *Մարինե-Մառա*, *Կարինե-Կառա*, *Նարինե-Նառա*, *Չարուհի-Չառա*, *Գայանե-Գայա* և այլն, փաղաքշակամի կազմության օտար ձևեր՝ *Միզոանչիկ*, *Լևոնչիկ*, *Անուշկա*, *Մարիշկա* և այլն, *իզականի շեշտման ձևեր՝ Անահիտ*, *Կարինա*, *Ռուզաննա* և այլն:

Օտար հիմքով կազմված անուն-ազգանունները նույնպես թիրախ են օտար ծավալապաշտների նվաճողական նկրտումների համար: Օրինակ, թուրքերը ժամանակ առ ժամանակ վերհիշում են ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ազգանվան թուրքական ստուգաբանությունը և դրանով փորձում հիմնավորել նրա՝ իբր թուրքական ծագումը:

Ինչպես տեսնում ենք, խորհրդանշային արժեքից զրկված և միայն ազգային-լեզվական-մշակութային կողմնորոշման հայտանիշներ են «փոխառյալ» հատուկ անունները («Մայակ», «Իսկրա», Օլեգ, Օֆելյա, Ճալիկո, Այվազերդի և այլն)⁷: Սրանք փաստորեն հատկանվանական իրենց գործառույթները կատարում են թերի (կատարում են միայն անվանողական գործառույթ, ոչ նպատակադրված կերպով՝ նաև հայտանշող գործառույթ)⁸: Սրանցից առանձնանում են «նվիրաբերված» հատուկ անունները, որոնք հայտանշային արժեքից բացի ունեն նաև յուրահատուկ խորհրդանշային արժեք, քանի որ մատնանշում են քաղաքական կամ մշակութային որոշակի հարաբերություններ («Մոսկվա» կինոթատրոն, «Ռոսիա» կինոթատրոն, Ազիզբեկովի հրապարակ, Մայակովսկի գյուղ և այլն): Ի տարբերություն նախորդ խմբի, սրանք հայտանշային գործառույթը կատարում են նպատակադրված կերպով: Այս կարգի անունները պահանջում են լեզվական նախնական որոշակի վերամշակում, որպեսզի հարմարվեն փոխառող լեզվին: Այդպիսի վերամշակման չենթարկված անունները լեզվի մեջ մուտք չեն գործում (լեզուն կարծես «շրջանցում» է դրանց), իսկ խոսքի մեջ հայտնվում են միայն որպես տեղադրումներ (հմմտ. թեյարան *Русь*, սրբաբարան *Уголок*, խորտկարան *Мунгукка*, լեղակ *Восход*, օղի *Русская зима*, *New Wind* խանութ, *ETA Tour* գործակալություն):

Յուրահատուկ հետևանքային շերտ են օտար նվաճողի կամ նախկին նվաճողի լեզվով հենց բնիկների կողմից տրված անվանումները (Ղուվի ուրթ, Անագյունեյ, Խաչի թալա, կաֆե «Սյուրպրիզ», «Օրբիտա» խանութ, «Ռայ» բար և այլն):

«Փոխառյալ» հատուկ անունների վերաբերյալ պետք է ավելացնել, որ դրանք ընդհանրապես մերժելի են որպես լեզվի խորհրդանշային գործառույթին հակասող երևույթներ: Այս առումով սրանց հարաբերակից են այսպես կոչված «միջազգայնաբանությունները» և ընդհանրապես բոլոր կարգի օտարաբանությունները (փոխառյալ հատկաբանություններից բացի), որոնք գրեթե զուրկ են վերոհիշյալ գործառույթներից: Տվյալ լեզվի համակարգին հարմարվելուն և յուրահատուկ ձև ձեռք բերելուն զուգընթաց փոխառությունները ստանում են հայտանշային (տարբերակող) արժեք: Երբ ձևի յուրահատկությունն այնքան է ընդգծվում, որ փոխառությանն օժտում է մեկուսացնող գործառույթով, փաստորեն տեղի է ունենում փոխառության յուրացում (*եկեղեցի*, *Հովհաննես*, *Մարինե*, *հրաման* և այլն): Լիովին յուրացված փոխառությունները ձեռք են բերում նաև ազգային խորհրդանշային արժեք (*Անահիտ*, *եկեղեցի* և այլն):

Այսպիսով, հատուկ անունը կատարում է ոչ միայն առանձին անձի, առարկայի (կամ առարկաների առանձին տեսակի) անվանապես անհատականացման գործառույթ և հարաբերակցվում առարկաների դասի հետ, այլև ունի խորհրդանշային, հայտանշային և մեկուսացնող գործառույթներ:

⁷ Սրանց հետ չեն նույնանում օտար ծագմամբ տեղայնացած (յուրացված) կամ երկրորդաբար կազմված հատուկ անունները (*Մոսկես*, *Իսահակյան*, *Թումանյանի շրջան* և այլն):

⁸ Փոխառյալ հատուկ անունների մի տեսակ են պարտադրված օտար հատուկ անունները («*Դինամո*» *ԿՄԸ*, «*Բուրևեստնիկ*» *ԿՄԸ*, *Կոյբիշև* *գյուղ* և այլն):

О. Л. ЗАКАРЯН - О символизирующей, симптоматической и изолирующей функциях имени. - Одна из важных функций языка - выявление ориентаций носителей данного языка, симптоматизация личностей или национальных, культурных, классовых, политических и других видов общественных групп - носителей данного языка. Язык может восприниматься большей или меньшей частью членов данной социальной группы как знамя самобытности, символ единства. Язык является также признаком дифференциации, способом изоляции.

Символизирующая, симптоматическая и изолирующая функции в или иной степени свойственны не только языкам вообще, но также и языковым единицам - словам, особенно именам.

Заемства ослабляют изолирующую функцию языков. Следовательно, каждое исконное слово данного языка, особенно если имеется заимствованный эквивалент, само собой приобретает символизирующую функцию.

Собственные имена преимущественно выполняют символизирующую, а также симптоматическую функции; а изолирующая функция характерна лишь для переводимых собственных имен. По сравнению с нарицательными и собственными именами среднее положение занимают экзотизмы (имена экзотичных явлений) и некоторые сугубо профессиональные термины.

Лишенными символизирующей функции и представляющими собой только признаки национально-языковой-культурной ориентации являются "заимствованные" собственные имена, которые фактически свои функции собственных имен выполняют в неполной мере (выполняют лишь номинативную функцию, нецеленаправленно - также симптоматическую функцию). От них обособляются "посвященные" собственные имена, которые кроме симптоматической значимости имеют также своеобразную символизирующую функцию, так как указывают на определенные политические или культурные отношения.